ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2020-2022թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (հուլիս ամսվա վերջի դրությամբ)









2022թ. հուլիսի 31-ի դրությամբ՝

1) ՀՀ պետական պարտքը կազմել է 4 տրիլիոն 66.6 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 8.2%-ով, 2021թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 6.8%-ով, իսկ 2020 թվականի հուլիսի 31-ի նկատմամբ աճելով 5.6%-ով,

2) ՀՀ կառավարության պարտքը կազմել է 3 տրիլիոն 843.5 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 8.7%-ով, 2021թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 7.1%-ով, իսկ 2020թ. հուլիսի 31-ի նկատմամբ աճելով 6.2%-ով,

3) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 223 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 1.5%-ով, 2021թ. հուլիսի 31-ի նկատմամբ նվազելով 1.4%-ով, իսկ 2020թ. հուլիսի 31-ի նկատմամբ նվազելով 4%-ով,

4) ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 9 մլրդ 974.1 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 8.1%-ով, 2021թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 11.2%-ով, իսկ 2020թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 25.6%-ով,

5) ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 9 մլրդ 427.1 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 7.5%-ով, 2021թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 10.8%-ով, իսկ 2020թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 26.4%-ով,

6) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 547 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 19.5%-ով, 2021թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 17.6%-ով, իսկ 2020թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 14.3%-ով,

7) ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 2 տրիլիոն 386.7 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 19.7%-ով, 2021թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 21%-ով, իսկ 2020թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 11.7%-ով,

8) ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 1 տրիլիոն 456.8 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 17.7%-ով, 2021թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 30.5%-ով, իսկ 2020թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 58.8%-ով,

9) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 223 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 1.5%-ով, 2021թ. հուլիսի 31-ի նկատմամբ նվազելով 1.4%-ով, իսկ 2020թ. հուլիսի 31-ի նկատմամբ նվազելով 4%-ով,

10) ՀՀ կառավարության արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 5 մլրդ 854 մլն ԱՄՆ դոլար, նվազելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 5.4%-ով, 2021թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 5.8%-ով, իսկ 2020թ. հուլիսի 31-ի նկատմամբ աճելով 5.1%-ով,

11) ՀՀ կառավարության ներքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 3 մլրդ 573,1 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 38.6%-ով, 2021թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 55.7%-ով, իսկ 2020թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 89%-ով,

12) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 547 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 19.5%-ով, 2021թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 17.6%-ով, իսկ 2020թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 14.3%-ով:

ԱԺԲԳ









ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը 2022թ. հուլիսի 31-ի դրությամբ կազմել է 4 մլրդ 266.3 մլն ԱՄՆ դոլար, նվազելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 4.8%-ով, 2021թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 6%-ով, իսկ 2020թ. հուլիսի 31-ի նկատմամբ՝ 7.4%-ով:

2022թ. հուլիսի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքում՝

1) միջազգային կազմակերպությունների բաժինը կազմել է 78.84%, ինչը ավել է 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից 1.46 տոկոսային կետով, 2021թ. հուլիսի 31-ի ցուցանիշից՝ 1.21 տոկոսային կետով, 2020թ. հուլիսի 31-ի ցուցանիշից՝ 2.16 տոկոսային կետով,

2) օտարերկրյա պետությունների բաժինը կազմել է 20.83%, ինչը պակաս է 2021թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ 1.42 տոկոսային կետով, 2021թ. հուլիսի 31-ի համեմատությամբ՝ 1.13 տոկոսային կետով, իսկ 2020թ. հուլիսի 31-ի համեմատությամբ՝ 2.05 տոկոսային կետով,

3) առևտրային բանկերի բաժինը կազմել է 0.33, ինչը պակաս է 2022թ. դեկտեմբերի 31-ի ցուցանիշից՝ 0.04 տոկոսային կետով, 2021թ. հուլիսի 31-ի ցուցանիշից՝ 0.08 տոկոսային կետով, իսկ 2020թ. հուլիսի 31-ի ցուցանիշից՝ 0.11 տոկոսային կետով:

2022թ. հունվար-հուլիսին ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված՝

1) տոկոսավճարները կազմել են 104.4 մլրդ դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 7 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 21.35 մլրդ դրամով:

2) ներքին տոկոսավճարները կազմել են 60.78 մլրդ դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 6.42 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 19.63 մլրդ դրամով:

3) արտաքին տոկոսավճարները կազմել են 43.63 մլրդ դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 0.59 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 1.73 մլրդ դրամով:

ԱԺԲԳ

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



2022թ. հունվար-հուլիսի պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը՝

1) փոխառու զուտ միջոցների հաշվին կազմել է 136.2 մլրդ դրամ, ինչը պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ 320.43 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 146.49 մլրդ դրամով,

2) ներքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 144 մլրդ դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 27.12 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է 34.61 մլրդ դրամով,

3) արտաքին փոխառու միջոցների հաշվին կազմել է -7.8 մլրդ դրամ, ինչը պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 347.55 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 111.87 մլրդ դրամով:

ՀՀ կառավարության կողմից 2022թ. հունվար-հուլիսին՝

1) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 38.9 մլն դոլար տոկոսավճար, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 7%-ով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 32%-ով,

2) արտաքին վարկերի սպասարկման նպատակով մարվել է 129.13 մլն դոլարի մայր գումար, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 1.3%-ով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 6.6%-ով,

3) ստացվել են 108.28 մլն դոլարի վարկային միջոցներ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 92.3%-ով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 67.6%-ով,

4) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 168.03 մլն դոլար (տոկոսավճար և մայր գումարի մարում), ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 2.7%-ով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 5.8%-ով:

ԱԺԲԳ

Պետական պարտատոմսերի ծավալը, մլրդ դրամ



Պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը, օր



ՀՀ Կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը, %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը, ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության, %



2022թ. հուլիսի 31-ի դրությամբ՝

1) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 1 տրիլիոն 382.4 մլրդ դրամ, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի, 2021թ. հուլիսի 31-ի և 2020թ. հուլիսի 31-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 173.5, 307.2 և 533.9 մլրդ դրամով,

2) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 3559 օր, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ պակաս է 202 օրով, 2021թ. հուլիսի 31-ի համեմատությամբ պակաս է 505 օրով, իսկ 2020թ. հուլիսի 31-ի համեմատությամբ պակաս է 445 օրով:

ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը 2022թ. հուլիսի 31-ի դրությամբ կազմել է 5.68%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի համապատասխան ցուցանիշի համեմատությամբ ավել է 1.0 տոկոսային կետով, 2021թ. հուլիսի 31-ի համեմատությամբ ավել է 1.22 տոկոսային կետով, իսկ 2020թ. հուլիսի 31-ի համեմատությամբ ավել է 1.11 տոկոսային կետով:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության 2022թ. հուլիսի 31-ի դրությամբ՝

1) կարճաժամկետ պարտքի բաժինը կազմել է 1.53%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ մեծ է 0.33 տոկոսային կետով, 2021թ. հուլիսի 31-ի համեմատությամբ մեծ է է 0.4 տոկոսային կետով, իսկ 2020թ. հուլիսի 31-ի համեմատությամբ մեծ է 0.45 տոկոսային կետով,

2) միջնաժամկետ պարտքի բաժինը կազմել է 11,54%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի, 2021թ. հուլիսի 31-ի և 2020թ. հուլիսի 31-ի համեմատությամբ մեծ է համապատասխանաբար՝ 1.13, 3.98 և 4.18 տոկոսային կետերով,

3) երկարաժամկետ պարտքի բաժինը կազմել է 86.93%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի, 2021թ. հուլիսի 31-ի և 2020թ. հուլիսի 31-ի համեմատությամբ փոքր է համապատասխանաբար՝ 2.76, 5.03 և 5.88 տոկոսային կետերով:

ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2022-2024 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂԵՆՇԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (2020-2022թթ. հուլիս ամսվա վերջի դրությամբ)

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, տարի



Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով), %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի, %



ՀՀ Կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները, %



ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2022-2024թթ. ռազմավարական ծրագրով՝

1) պարտքի մինչև մարում միջին ժամկետի ուղենշային ցուցանիշը սահմանված է 8-11 տարի: ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը 2022թ. հուլիսի 31-ի դրությամբ կազմել է 8.13 տարի: Այս ցուցանիշը 2021թ. հուլիսի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից պակաս է 0.63 տարով, իսկ 2020թ. հուլիսի 31-ի ցուցանիշից՝ 0.63 տարով;

2) առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշռի (պետական գանձապետական պարատոմսերի գծով) ուղենշային ցուցանիշը սահմանված է առավելագույնը 20%: Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով) 2022թ. հուլիսի 31-ի դրությամբ կազմել է 9.77%, որը 2021թ. հուլիսի 31-ի և 2020թ. հուլիսի 31-ի դրությամբ արձանագրված մակարդակներից փոքր է 1.75 և 2.48 տոկոսային կետերով:

3) ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշռի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 80%: ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի 2022թ. հուլիսի 31-ի դրությամբ ունեցել է հետևյալ պատկերը. ֆիքսված տոկոսադրույքով՝ 83.79%, լողացող տոկոսադրույքով՝ 16.21%: Ընդ որում, 2022թ. հուլիսի 31-ի դրությամբ արձանագրված ֆիքսված տոկոսադրույքի ցուցանիշը 2021թ. հուլիսի 31-ի ցուցանիշից ավել է1.13 տոկոսային կետով, իսկ 2020թ. հուլիսի 31-ի ցուցանիշից ավել է 2.71 տոկոսային կետով:

4) ներքին պարտքի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 25.%, ՀՀ կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները 2022թ. հուլիսի 31-ի դրությամբ ունեցել են հետևյալ պատկերը. արտաքին պարտք՝ 62.1%, ներքին պարտք՝ 37.9%: Ընդ որում, 2022թ. հուլիսի 31-ի դրությամբ արձանագրված ներքին պարտքի կշռի ցուցանիշը 2021թ. հուլիսի 31-ի և 2020թ. հուլիսի 31-ի ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար՝ 10.92 և 12.55 տոկոսային կետերով: